



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն  
Ֆ Ի Ն Ա Ն Ս Ն Ե Ր Ի Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն  
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1

**«Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ  
նախագահ պարոն Փ. Թադևոսյանին**

**Հարգելի պարոն Թադևոսյան**

Ի պատասխան Ձեր 14.01.2016թ. (առցանց համար CF5B-698E-D341) գրության, հայտնում եմ.

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15.1-րդ հոդվածի համաձայն **2016 թվականի հունվարի 1-ից սկսած՝ հաշվարկային փաստաթղթերը** (բացառությամբ հսկիչ-դրամարկղային մեքենաների կտրոնների և ապրանքների արտահանման դեպքում դուրս գրվող հաշվարկային փաստաթղթերի) դուրս են գրվում **բացառապես էլեկտրոնային եղանակով՝** Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Գրությամբ նշված դեպքում, ֆիզիկական անձանց կողմից ծառայությունների մատուցման գործարքների մասով հաշվարկային փաստաթղթերի էլեկտրոնային եղանակով դուրս գրումն ապահովելու նպատակով մշակվել է համապատասխան իրավական ակտ: Մինչև նշված փոփոխությունների կատարումը և *այլ հաշվարկային փաստաթղթերն էլեկտրոնային եղանակով դուրս գրելու համապատասխան ծրագրային փոփոխությունների ներդրումը «e-invoicing» համակարգում*, ֆիզիկական անձանց կողմից մատուցվող ծառայությունների մասով կարող են դուրս գրվել թղթային կրիչի վրա լրացված հաշվարկային փաստաթղթեր:

**Հարգանքով՝**

**Վ. Միրումյան**